Հավելված
ՀՀ փոխվարչապետի N 560 - Ա
որոշման

Ծ Ր Ա Գ Ի Ր

«ՈՒԱՋ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ԵՎ ՀԵՂՈՒԿՑԻՐ ԹՈՒՆԱՔԻՄԻԿԱՏՆԵՐ ՍՐՍԿՈՂ ՍԱՐՔԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ»

1.	Ծրագրի նպատակը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի և Արարատի մարզերում բնակվող սոցիալապես անապահով պայմաններում ապրող չորս և ավելի երեխաներ կամ մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխա/երեխաներ ունեցող քաղաքացիներին գյուղատնտեսական աշխատանքների ավելի արդյունավետ կազմակերպման նպատակով ՌՈՒԱՋ ավտոմեքենաների և հեղուկացիր թունաքիմիկատներ սրսկող սարքերի նվիրաբերում:
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից:
3.	Բարեգործը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
4.	Ծրագիրը կատարողը	«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Հրանտ Վարդանյան փողոց 6, ՀՎՀՀ՝ 02269952)
5.	Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը	Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի և Արարատի մարզեր, բնագավառը՝ սոցիալական
6.	Ծրագրի բյուջեն	122 580 000,00 (հարյուր քսան երկու միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) դրամ
7.	Բարեգործությունն ստացողը	Ծրագրի շահառու են հանդիսանում Հայաստանի Հանրապետության Արմավիրի, Արագածոտնի, Կոտայքի և Արարատի մարզերում բնակվող սոցիալապես անապահով պայմաններում ապրող չորս և ավելի երեխաներ կամ մինչև 18 տարեկան հաշմանդամ երեխա/երեխաներ ունեցող քաղաքացիներ:
8.	Ծրագրի իրականացման տևողությունը	2023 թվականի մայիսի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	1. Ծրագրի շրջանակներում նախատեսվում է իրականացնել թվով 12 հատ ՌԱԶ ավտոմեքենաների և թվով 6 հատ շարժական սրսկիչ հեղուկցիր թունաքիմիկատներ սրսկող KF-300L սարքերի նվիրաբերում: 2. Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 122 580 000,00 (հարյուր քսաներկու միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) դրամ: 3. Միջոցառումը նախատեսվում է իրականացնել 2023 թվականի մայիսի 1-ից մինչև 2023 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածում:
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը	1. Տվյալ ծրագրի շրջանակներում նախատեսվում է ձեռք բերել 2023 թվականի արտադրության թվով 12 (տասներկու) միավոր ՌԱԶ մակնիշի ավտոմեքենաներ և թվով 6 հատ շարժական սրսկիչ հեղուկցիր թունաքիմիկատներ սրսկող KF-300L սարքեր: 2. Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 122 580 000,00 (հարյուր քսան երկու միլիոն հինգ հարյուր ութսուն հազար) դրամ:
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում:
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Չի նախատեսվում:
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	1. Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրակա-նացվելու է «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբար-ձուների խորհրդի կողմից; 2. Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված «Բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի» 25-րդ կետով սահմանված կարգով տեղեկությունների ներկայացում լիազորված մարմնին;

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

14.08.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ